

No. 54001*

**Republic of Korea
and
Armenia**

Agreement between the Government of the Republic of Korea and the Government of the Republic of Armenia on the mutual waiver of visa requirements for holders of diplomatic and official passports. Seoul, 23 February 2012

Entry into force: *22 May 2012 by notification, in accordance with article 8*

Authentic texts: *Armenian, English and Korean*

Registration with the Secretariat of the United Nations: *Republic of Korea, 10 November 2016*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

**République de Corée
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République de Corée et le Gouvernement de la République d'Arménie relatif à l'exemption mutuelle des formalités de visas pour les titulaires de passeports diplomatiques et officiels. Séoul, 23 février 2012

Entrée en vigueur : *22 mai 2012 par notification, conformément à l'article 8*

Textes authentiques : *arménien, anglais et coréen*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *République de Corée, 10 novembre 2016*

**Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏ ՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոռեայի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանը, այսուհետ՝ Կողմեր,

դիվանագիտական երկու երկրների միջև բարեկամական հարաբերությանն ենթարկվող զարգացնելու ընդհանուր ցանկությանը,

ցանկանալով դուրացնել դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց այցելությանը Կոռեայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Պայմանավորվող կողմերի այն քաղաքացիները, ովքեր ունեն դիվանագիտական և պաշտոնական վավեր անձնագրեր, ազատվում են մուտքի արտոնագրի պահանջից մյուս Կողմի տարածք մուտքի, ելքի և այդ տարածքով տարանցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձինք կարող են առանց մուտքի արտոնագրի գտնվել մյուս Կողմի տարածքում մուտք գործելու օրվանից իննսուս (90) օրը չգերազանցող ժամանակահատվածով: Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձանց համար գտնվելու ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մյուս Կողմի իրավասու մարմինների կողմից՝ ուղարկող Կողմի դիվանագիտական առաքելության կամ հյուսպատուական հիմնարկի զրավոր խնդրանքի հիման վրա:

Հոդված 2

1. Կողմերից որևէ մեկի այն քաղաքացիները, ովքեր նշանակված են մյուս Կողմի տարածքում՝ տվյալ Կողմի դիվանագիտական առաքելությանում կամ հյուսպատուական հիմնարկում, և ովքեր ունեն դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր, իրենց պաշտոնավարման ժամկետի ընթացքում ազատվում են մուտքի արտոնագրի պահանջից:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված մուտքի արտոնագրի պահանջից ազատումը կիրառվում է նաև սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձանց ուղեկցող ամուսնու, ծնողների և երեխաների նկատմամբ՝ պայմանով, որ նրանք ունենան ուղարկող Կողմի դիվանագիտական կամ պաշտոնական վավեր անձնագրեր:

Հոդված 3

Այն անձինք, ում նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, պետք է հարգեն մյուս Կողմի օրենքներն ու կանոնակարգերը և հետևեն օտարերկրյա քաղաքացիներին՝ մուտքի, ելքի, գտնվելու և տարանցման ընթացակարգերը կարգավորող՝ գործող օրենսդրությունը՝ չսահմանափակելով «Դիվանագիտական հարաբերություններին մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Հյուպատոսական հարաբերություններին մասին» Վիեննայի կոնվենցիայի ներքո տրված արտոնություններն ու անձեռնմխելիությունը:

Հոդված 4

1. Յուրաքանչյուր Կողմ իրեն իրավունք է վերապահում մերժելու մուտքը կամ իր տարածքում դադարեցնելու կացությունը դիվանագիտական կամ պաշտոնական վավեր անձնագիր ունեցող այն անձանց, ում կարող է անցանկալի համարել: Նման մերժման մասին դիվանագիտական ուղիներով անհապաղ ծանուցվում է մյուս Կողմը:

2. Յուրաքանչյուր Կողմ իրեն իրավունք է վերապահում ժամանակավորապես սահմանափակելու կամ կասեցնելու սույն Համաձայնագրի գործողությունն ամբողջությամբ կամ մասամբ՝ ելնելով հանրային կարգի, անվտանգության կամ առողջության պահպանման նկատմունքից: Նշված սահմանափակման կամ կասեցման, կամ դրանց դադարեցման մասին դիվանագիտական ուղիներով անհապաղ ծանուցվում է մյուս Կողմը:

Հոդված 5

1. Կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են իրենց դիվանագիտական կամ պաշտոնական վավեր անձնագրերի նմուշները և ախրան սույն Համաձայնագիրն ու ժիմեջ մտնելը:

2. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են դիվանագիտական կամ պաշտոնական անձնագրերում ցանկացած փոփոխության մասին դրանց ու ժիմեջ մտնելուց առնվազն երեսուն (30) օր առաջ:

Հոդված 6

Ցանկացած անհամաձայնություն կամ վեճ, որն առաջանում է սույն Համաձայնագրի մեկնաբանումից կամ կիրառվումից, կարգավորվում է Կողմերի միջև՝ բանակցություններին և խորհրդակցություններին միջոցով:

Հոդված 7

Փոխադարձ համաձայնություններ Կողմերը կարող են լրացումներ և փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրում, որոնք ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածում սահմանված ընթացակարգերի համապատասխան:

Հոդված 8

1. Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր տեղեկացում են Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման մասին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցումն ստանալու օրվանից և ուժի մեջ է մտնում անորոշ ժամկետով:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը դիվանագիտական ուղիներով ուղարկված գրավոր ծանուցման միջոցով: Դադարեցումն ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը մյուս Կողմի ստանալուց իննսուն (90) օր հետո:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է քաղաքում 2012 թվականի թին, երկու բևորինակով, յուրաքանչյուրը՝ կոթերեն, հայերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում առաջացած որևէ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ԿՈՐԵԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

76 80 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

[Handwritten signature]